ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

« 4 » ապրիլի 2019 թվականի N: 106-Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 30-Ի N 62-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու Ն. Ա. Մելիքյանի անվան թիվ 2 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի 2019 թվականի մարտի 27-ի N 57-18, «Գյումրու Էնրիկո Մատտեի անվան պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի 2019 թվականի մարտի 26-ի N 28, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Բեռլին պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի 2019 թվականի ապրիլի 3-ի N 4/22 և «Արթիկի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի 2019 թվականի մարտի 26-ի N 1 գրությունները.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու Ն. Ա. Մելիքյանի անվան թիվ 2 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված անձանց պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու նպատակով բժշկական կազմակերպություններ ուղեգրող հանձնաժողովի (ՈՒՀ-30) անհատական կազմում Արմինե Գրիգորյանի փոխարեն ընդգրկել Սուսաննա Հարությունյանին:

2. «Գյումրու Էնրիկո Մատտեի անվան պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված անձանց պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու

նպատակով բժշկական կազմակերպություններ ուղեգրող հանձնաժողովի (ՈՒՀ-32) անհատական կազմում Էլմիրա Բաղդասարյանի փոխարեն ընդգրկել Արկադի Անդրիասյանին:

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Բեռլին պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված անձանց պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու նպատակով բժշկական կազմակերպություններ ուղեգրող հանձնաժողովի (ՈՒՀ-34) անհատական կազմում Կարեն Գևորգյանի փոխարեն ընդգրկել Սարգիս Հովհաննիսյանին:

4. «Արթիկի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված անձանց պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու նպատակով բժշկական կազմակերպություններ ուղեգրող հանձնաժողովի (ՈՒՀ-37) անհատական կազմում Արթուր Մկրտչյանի փոխարեն ընդգրկել Էդգար Բզնունուն:

5. Այդ կապակցությամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2018 թվականի մարտի 30-ի «Բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված անձանց պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու նպատակով բժշկական կազմակերպություններ ուղեգրող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզային ենթակայության առողջապահական կազմակերպություններում հանձնաժողովներ ձևավորելու, հանձնաժողովների անհատական կազմերը, աշխատակարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2014 թվականի ապրիլի 9-ի N 70-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 62-Ա որոշման 1-ին կետով հաստատված՝

1) 2-րդ հավելվածի 5-րդ կետում «Արմինե Գրիգորյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու Ն. Ա. Մելիքյանի անվան թիվ 2 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության բուժքույր լաբորանտ, հանձնաժողովի քարտուղար» բառերը փոխարինել «Սուսաննա Հարությունյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու Ն. Ա. Մելիքյանի անվան թիվ 2 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության կադրերի պատասխանատու, հանձնաժողովի քարտուղար» բառերով:

2) 5-րդ հավելվածի 1-ին կետում «Էլմիրա Բաղդասարյան - «Գյումրու Էնրիկո Մատտեի անվան պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության բուժական գծով տնօրենի տեղակալի պարտականությունները կատարող, հանձնաժողովի նախագահ» բառերը փոխարինել «Արկադի Անդրիասյան - «Գյումրու Էնրիկո Մատտեի անվան

պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն, հանձնաժողովի նախագահ» բառերով:

3) 6-րդ հավելվածի 1-ին կետում «Կարեն Գևորգյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Բեռլին պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պաշտոնակատար, հանձնաժողովի նախագահ» բառերը փոխարինել «Սարգիս Հովհաննիսյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Բեռլին պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն, հանձնաժողովի նախագահ» բառերով:

4) 9-րդ հավելվածի 3-րդ կետում «Արթուր Մկրտչյան - Արթիկի սոցիալական աջակցության տարածքային գործակալության մասնագետ, հանձնաժողովի անդամ» բառերը փոխարինել «Էդգար Բզնունի - Արթիկի սոցիալական աջակցության տարածքային գործակալության 1-ին կարգի մասնագետ, հանձնաժողովի անդամ» բառերով:

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝